Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 24-ի N 82 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական պարարտանյութի ձեռքբերման հարցում աջակցելը, հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը նպաստելն է:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը՝

1) պայմանագրային հիմունքներով մատակարար կազմակերպությանն է հատկացնում (այսուհետ՝ մատակարար) համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 27167.0 տոննա ազոտական պարարտանյութ «Ամոնիակային սելիտրա» (34,4 տոկոս ազոտի պարունակությամբ) ձեռք բերելու և Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների հողօգտագործողներին ու Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպություններին 50 կգ քաշով, 1 պարկը 6000 դրամ արժեքով վաճառելու համար.

2) պայմանագրային հիմունքներով մատակարար կազմակերպությանը հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ՝ ներմուծված պարարտանյութի բեռնման և համայնքներ բեռնափոխադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության մարզերում և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպություններում պարարտանյութի վաճառքն իրականացվում է՝ համաձայն աղյուսակի:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

1) ըստ համայնքների հաստատում, անհրաժեշտության դեպքում փոխում են մարզին հատկացված ազոտական պարարտանյութի բաշխումը՝ համաձայն N 1 ձևի, և ծրագիրը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ մատակարարին տրամադրելու համար.

2) Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացվող պարարտանյութի քանակությունները՝ համաձայն աղյուսակի, Հայաստանի Հանրապետության մարզերում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և գյուղատնտեսության նախարարություններ՝ չիրացված պարարտանյութի խմբաքանակի վերաբերյալ՝ վերա-բաշխում կատարելու համար.

3) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են պարարտանյութ գնել ցանկացող հողօգտագործողների ցուցակների կազմումը՝ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը մինչև 1 տոննա (20 պարկ) քանակով և ծրագրով նախատեսված գնով գումարների հավաքագրումը, աջակցում մատակարարին դրա դիմաց ազոտական պարարտանյութը հողօգտագործողներին հատկացնելու գործում: Պարարտանյութ ստացող հողօգտագործողների ցուցակները տրամադրում և հավաքագրված գումարները փոխանցում են մատակարարին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի և մատակարարի միջև կնքված պայմանագրի.

4) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են համայնքներում ծրագրի շրջանակներում ազոտական պարարտանյութ գնած շահառուների ցուցակների հավա-

քագրումը՝ համաձայն N 2 ձևի, և այդ ցուցակների պահպանությունը՝ տեղեկատվությանը տիրապետելու համար.

5) ապահովում են ծրագրի շրջանակներում մարզի համայնքների համար նախատեսված, փաստացի վաճառված ազոտական պարարտանյութի քանակի և շահառուների մասին տեղակատվության հավաքագրումը, հաստատումը՝ համաձայն N 3 ձևի՝ մեկական օրինակ տրամադրելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը և մատակարարին:

5. Մատակարարը պարտավոր է՝

1) սույն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծել 27167.0 տոննա ազոտական պարարտանյութ «Ամոնիակային սելիտրա» 34,4 տոկոս ազոտի պարունակությամբ (այսուհետ՝ պարարտանյութ).

2) Հայաստանի Հանրապետություն ներմուծված պարարտանյութի որակը հավաստելու համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դրա լաբորատոր փորձաքննության արդյունքները.

3) պարարտանյութի վաճառքն իրականացնել համաձայն մարզպետների կողմից հաստատված ցանկերի.

4) պարարտանյութի վաճառքն իրականացնել 1 կիլոգրամը 120 դրամ արժեքով (50 կգ քաշով 1 պարկը 6000 դրամ).

5) մարզպետների կողմից հաստատված ցանկով պարարտանյութը համայնքներում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում տեղեկացնել համապատասխան մարզպետարան՝ չիրացված խմբաքանակի վերաբաշխման նոր ցանկ հաստատելու համար.

6) ստուգել և հաստատել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից լրացված N 3 ձևերը և պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու համապատասխան մարզպետարաններ.

7) N 3 ձևում ներկայացված տեղեկատվության մեջ անճշտություններ հայտնաբերելու դեպքում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան մարզպետարան՝ ճշտումներ կատարելու համար.

8) Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացված և Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից ըստ համայնքների հաստատված ազոտական պարարտանյութն ամբողջությամբ չիրացվելու դեպքում չիրացված պարարտանյութի քանակի համար տրամադրված սուբսիդիան և այդ խմբաքանակի բեռնման ու համայնքներ բեռնափոխադրման աշխատանքները կազմակերպելու համար տրամադրված գումարը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ծրագրի կատարման մասին հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելու համար, Հայաստանի Հանրապետության մարզերում և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպություններում 27167.0 տոննա պարարտանյութի վաճառքը մինչև 2013 թվականի հունիսի 1-ը ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել՝

ա. հաշվետվություն ծրագրի կատարման մասին,

բ. ֆինանսական հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Աղյուսակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անվանումը	Գարնանը հատկացվող պարարտանյութի քանակությունը (տոննա)
Արագածոտն	3300
Արարատ	4470
Արմավիր	5000
Գեղարքունիք	3000
Լոռի	2000
Կոտայք	1500
Շիրակ	4200
Սյունիք	2000
Վայոց ձոր	480
Տավուշ	300
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	900
«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	15
«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի ԳԿ» ՊՈԱԿ	2
Ընդամենը	27167

Ձև N 1

Հաստատում եմ
ՀՀ _____ մարզպետ
_____
_____
____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻՆ
ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿԸ՝
ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Համայնքը	Հատկացված ազոտական պարարտանյութի քանակը (տոննա)	Հատկացված ազոտական պարարտանյութի դիմաց հավաքագրման ենթակա գումարը (դրամ)
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			
Ընդամենը			

Գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության պետ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 2

Ց Ա Ն Կ

ՀՀ _____ ՄԱՐԶԻ _____ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՀՀ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱՋՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐ-
ՏԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ ԳՆԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը, հայրանունը	Անձնագրի տվյալները	Գնված պարարտանյութի քանակը	Ստորագրությունը
Ընդամենը				

Համայնքի ղեկավար _____
(Կ.Տ.) անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 3

Հաստատում եմ
մարզպետ

_____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱՋՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ _____ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ՓԱՍՏԱՑԻ ՎԱՃԱՌՎԱԾ ԱՋՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(20 Թ. _____-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

NN ը/կ	Համայնքը	Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը	Համայնքին նախատեսված քանակությունը	Համայնքում փաստացի վաճառված քանակությունը	Պարարտանյութ գնած շահառուների թիվը	Համայնքի ղեկավարի ստորագրությունը
Ընդամենը						

Մատակարար կազմակերպության անվանումը _____

(Կ.Տ.) (ստորագրությունը)